ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երեւան 26 հունիսի 2007թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի
2-րդ դատականը կազմը
Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի
Հ. Նազարյանի

Քննության առնելով «Խարիսխ գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ Արթուր Մարտիրոսյանի թիվ 7-6 անհատական դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

«Խարիսխ գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով «ՀՀ պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Ներկայացված դիմումը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 101 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի եւ 42.1 հոդվածի, Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 27, 28 հոդվածների եւ 69 հոդվածի 1, 2, 4, 5 կետերի, ինչպես նաեւ ՀՀ Սահմանադրական դատարանի Կանոնակարգի պահանջներին: Պահպանվել է Սահմանադրական դատարան դիմելու՝ օրենքով նախատեսված ժամկետը:

Դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները եւ գտնում է, որ իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Դիմողը միջնորդել է իրեն ազատել պետական տուրքի վճարումից, որը բավարարման ենթակա է, քանի որ ընկերության դրամարկղը եւ գույքը գտնվում են արգելանքի տակ:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի 6-րդ կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

«Խարիսխ գրուպ» ՍՊԸ ներկայացուցիչ Ա. Մարտիրոսյանի դիմումը՝ «ՀՀ պետական գույքի մասնավորեցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասին, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող ճանաչել ՀՀ Ազգային Ժողովին:

«Խարիսխ գրուպ» ՍՊԸ-ին ազատել պետական տուրքի վճարումից: